ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Թեստի կառուցվածքը 4
Թեստի բովանդակությունը 5
Հայոց լեզու..... .. 5
Հայ գրականություն..... 10
Հայ գրականության թեստային առաջադրանքների
թեմատիկ-բովանդակային տարատեսակներ..... 13
Հեղինակներ և ստեղծագործություններ 14
Բացատրություններ առաջադրանքների կատարման
վերաբերյալ 22
Պատասխանների ձևաթուղթը, լրացման կարգը 30
Հանձնարարվող գրականություն..... 31

Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 40500 օրինակ, 32 էջ:
Գրքույկը վաճառքի ենթակա չէ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 373 : 919.81
ԳՄԴ 74.2+81.2Հ
Հ 282

Կազմողներ՝ ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՄԻՐՅԱ ՀԱԼԱՋՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ՊԱՊՈՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Խմբագիր՝ ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ 282 Հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց:
Գնահատման և թեստավորման կենտրոն, 2011, 32 էջ:

ԳՄԴ 74.2+81.2Հ

ISBN 978-9939-805-71-9

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են չորս վանդակներ: Տվյալ առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է նաև կախված ձեր քննական միավորը:

Հանձնարարվող գրականություն

1. Հանրակրթական դպրոցի 5-12-րդ դասարանների՝ ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված հայոց լեզվի և հայ գրականության դասագրքեր[1]:
2. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 4 հատորով, Եր., 1969-80թթ.

[1] Յուրաքանչյուր ուստարվա համար քննական թեստ կազմելիս պետք է նկատի ունենալ այն դասագրքերը, որոնցով սովորել են տվյալ ուստարվա շրջանավարտները:

Պատասխանների ձևաթուղթը, լրացման կարգը


2012 թ. Միասնական քննություն
Պատասխանների ձևաթուղթ
Հայոց լեզու և հայ գրականություն
ազգանուն
անուն հայրանուն
անձնական համար
Եղե՛ք ուշադիր
* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0
0 1
Թեստ №
Ա մակարդակ
Ամբողջ միավորները
Ա մակարդակում միավորներ ստացած անձանց թիվը
Ամբողջ տոկոսները ընտրությունների
Բ մակարդակ
Բ մակարդակում միավորներ ստացած անձանց թիվը
Ամբողջ տոկոսները ընտրությունների
Ամբողջ ձևաթղթում փոխված պատասխանների քանակը
Լրացրե՛ք այս նախադասությունը՝
Ծանոթ եմ՝ քննության կարգին:

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ուղեցույցում ներկայացվում են հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննության առաջադրանքներում ներառվող նյութի թեմատիկ բովանդակային շրջանակները:

Ուղեցույցը կոչված է ոչ միայն պարզաբանելու մի շարք հարցեր, այլև օժանդակություն ցույց տալու հետևյալ ոլորտներում՝

- առաջադրանքների կառուցվածքային տիպերի լուծման եղանակների տեսական և գործնական բացատրություն,
- առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակների հստակեցում,
- առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնության որոշակիացում:

2012թ. պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում հիմնական դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության այն ծրագրերը և դպրոցական դասագրքերը, որոնցով սովորել են 2012 թվի շրջանավարտները, և ավագ դպրոցի դասագրքերի այն նյութերը, որոնք ներկայացված են բոլոր հոսքերի դասագրքերում:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 80 առաջադրանք: Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանի **4** տարբերակ:

Թեստը բաղկացած է **Ա** (1-50-րդ առաջադրանքներ) և **Բ** (51-80-րդ առաջադրանքներ) մակարդակներից: **Ա** մակարդակի առաջադրանքները վերաբերում են ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին: Միասնական քննությունը պարունակում է **Ա** և **Բ** մակարդակները: **Ա** և **Բ** մակարդակներում ընդգրկված են թե՛ հայոց լեզվի, թե՛ հայ գրականության հարցեր, ընդ որում՝ երկու մակարդակներում ներկայացված են հայոց լեզվի բոլոր բաժինները հետևյալ համամասնությամբ:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ	Ա մակարդակ		Բ մակարդակ	
	առաջադ. քանակը	առաջադ. թիվը	առաջադ. քանակը	առաջադ. թիվը
հնչյունաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն	9	1 - 9	4	51 - 54
բառագիտություն	8	10 - 17	5	55 - 59
ձևաբանություն	9	18 - 26	6	60- 65
շարահյուսություն	9	27 - 35	9	66- 74
ոճաբանություն	1	36	1	75
շարադրանք (տեքստ)	1	37	2	76 - 77
ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի մասին	1	38		
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	12	39 - 50	3	78 - 80

դատողություններ և այլն՝ համարակալված տառերով) կարող է պարունակել առաջադրանքի պահանջին համապատասխանող մեկից ավելի ճիշտ պատասխաններ: Հարցը սովորաբար ձևակերպվում է այսպես. **Ընդգծվածներից (Բերված հատվածներից) քանիսո՞ւմ կա (չկա) *այսինչ երևույթը*:** Պատասխանների տարբերակներում նշվում են թվեր՝ **1)** մեկում, **2)** երկուսում, **3)** երեքում, **4)** ոչ մեկում (կամ բոլորում): Դուք պետք է կարողանաք գտնել տրված նյութի համապատասխանությունը (կամ անհամապատասխանությունը) պահանջին և ընտրել այն տարբերակը, որում նշված քանակը համապատասխանում է ձեր ընտրած ճիշտ պատասխանների թվին:

Բերենք մեկ օրինակ.

7. Գրիգոր Նարեկացու տաղերի վերաբերյալ հետևյալ պնդումներից քանի՞սն են ճիշտ.

1. Նարեկացին իր տաղերով վիթխարի առաջընթաց է կատարել՝ հայ բանաստեղծությունը մոտեցնելով իրական կյանքին:
2. Նարեկացու տաղերից մեկում Քրիստոսին տեսնում ենք գոհար վարդի և ճերմակ շուշանի պատկերով:
3. Նարեկացին առաջին անգամ հայ քնարերգության մեջ պատկերել ու գովերգել է բնությունը:
4. Լինելով միստիկ բանաստեղծ՝ Նարեկացին առանց այլաբանության գովերգել է իրական կյանքը:

1) մեկը
2) երկուսը
3) երեքը
4) բոլորը

Գրիգոր Նարեկացու տաղերի վերաբերյալ այս դատողություններից երեքը ճիշտ են, սխալ է մեկը. Նարեկացին իրական կյանքի պատկերներ չի ստեղծել. այլաբանությամբ կերտել է գեղեցիկ բնանկարներ՝ հայ քնարերգության մեջ սկզբնավորելով կենդանի բնության երգը: Ճիշտ պատասխանն է՝ **3-րդը**:

Առաջադրանքի այս տեսակը բարդության աստիճանով գերազանցում է սովորական՝ ընտրովի պատասխաններով առաջադրանքներին այն առումով, որ եթե վերջիններում առկա է ընդամենը մեկ ճիշտ պատասխան (երեք սխալ պատասխաններ), որին կարելի է հանգել՝ պարզապես մեկը ճանաչելով կամ մյուսները բացառելով, ապա այս դեպքում կողմնորոշումը պահանջում է համապատասխան նյութի համակողմանի, ամբողջական իմացություն:

Այս կարգի առաջադրանքների քանակը քննական թեստի **Ա** մակարդակում չպետք է գերազանցի 2-ը, **Բ** մակարդակում՝ 3-ը:

- պատասխանի տարբերակում բերված դատողության ձևակերպման **ժխտական ձևը** կհակասի տեքստի՝ հաստատականով ձևավորված նույն մտքին, և հակառակը,
- դատողությանը հակասելը կարող է պայմանավորված լինել նրանում արտահայտված մտքերի **պատճառահետևանքային, պայմանահետևանքային, իմաստային այլ կապերի** խախտմամբ կամ տեքստում այդ մտքերի միջև նման կապի բացակայությամբ,
- դատողությունը կարող է հակասել տեքստին, եթե նրանում ոչ ճիշտ է արտահայտված տեքստում նկարագրվող դեպքերի կամ **գործողությունների ժամանակային հաջորդականությունը**,
- տեքստում արտահայտված մտքերին կարող է հակասել նաև այն, որ **մասնավորը ներկայացվում է ընդհանուրի փոխարեն,** և **հակառակը**:

Բերենք այդպիսի առաջադրանքի մեկ օրինակ.

6. **Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը**.

Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել 3-4-րդ դարերից մինչև 10-11-րդ դարերը: Հունարենի ազդեցությունը հայերենի վրա հիմնականում եղել է գրական-գրքային ճանապարհով, գիտության, գրականության և եկեղեցու միջոցով: Հունարենից գրաբարի փոխառած ավելի քան 900 բառերը գլխավորապես գիտական, մշակութային, եկեղեցական-կրոնական բնույթի են, ինչպես՝ ամֆիթատրոն, եկեղեցի, երգեհոն, քարտեզ, թատրոն, կամար, կիթառ, մեռոն, մատուռ, առամանդ և այլն, որոնցից ժամանակակից հայերենում գործածական է շուրջ 130 բառ, այսինքն՝ մոտ 14 տոկոսը:

1) Հայերենը հունարենից բառեր է փոխառել գերազանցապես գրաբարյան շրջանում:
2) Հայերենի գիտական, մշակութային, եկեղեցական-կրոնական բառապաշարում որոշ թիվ են կազմում հունարենից փոխառված բառերը:
3) Հայերենը հունարենից բառեր է փոխառել գլխավորապես բանավոր ճանապարհով:
4) Հունարեն փոխառությունների մի մասը ժամանակակից հայերենում գործածական չէ:

Ակնհայտ է, որ առաջին, երկրորդ և չորրորդ մտքերը ուղղակիորեն բխում են տեքստից կամ նրա այս կամ այն հատվածից, իսկ երրորդը ոչ միայն տեքստում չկա, այլև հակասում է նրա բովանդակությանը:

Որոշ առաջադրանքներ կազմված են այնպես, որ առաջարկվող նյութը (բառեր, բառակապակցություններ, նախադասության անդամներ,

ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Առաջադրանքները ներառում են հիմնական և ավագ դպրոցների «Հայոց լեզու» դասագրքերում ամփոփված ծրագրային նյութը:

Նկատի ունենալով, որ վերոհիշյալ դասագրքերում տեղ գտած որոշ մեկնաբանություններ և ձևակերպումներ տեղիք են տալիս մասնագիտական տարակարծությունների, հակասություններ ունեն նոր ծրագրերի ու դասագրքերի, ինչպես նաև տերմինաբանական կոմիտեի և հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների, այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի հետ՝ նպատակահարմար է այս փուլում քննական թեստերից բացառել.

ուղղագրությունից և ուղղախոսությունից՝

1. **-ի**-ով վերջացող հիմքով և **-վետ** ածանցով կազմված բառերի (օր.՝ **ալի+ա+վետ**) ուղղագրությունը,
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը,
3. օտար ծագմամբ հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը,

բառագիտությունից՝

1. հատուկ բառապաշարը (բացի հնաբանություններից, օտարաբանություններից, փոխառություններից),
2. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումն ու ճանաչումը,
3. բառերի կապակցելիությունը,
4. նույնարմատ և համահունչ համանունները,
5. քարացած ածանցները,
6. կցական բարդությունը,
7. հարադրական բարդությունների տարբերակումը բառակապակցություններից,
8. համառոտագրությունները,
9. բառարանագրությունը,

ձևաբանությունից՝

1. հոլովման և խոնարհման հիմքերը,
2. սեռական հոլովը տրականից և հայցականը ուղղականից և տրականից տարբերակելը,
3. որակական և հարաբերական ածականների տարբերակումը,
4. դերանունների խոսքիմասային դասակարգումը (գոյական, ածական, թվական, մակբայ դերանուններ),

5. բայերի կրկնասեռությունը, անդրադարձ և փոխադարձ բայերի սեռը
6. ժամանակաձևերի ոճական կիրառությունները,
7. արգելական հրամայականի զուգաձևությունները,
8. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը,
9. ընդհանրական մակբայները,
10. կապերի, շաղկապների, ձայնարկությունների իմաստային տեսակները,
11. վերաբերականների այն տեսակները, որոնք արտահայտում են ցուցադրում, հորդոր, խնդրանք, ափսոսանք, ուրախություն, սաստկացում,

շարահյուսությունից՝

1. ըղձական նախադասությունը,
2. հրամայական նախադասության արտահայտության ձևերը՝ բացի հրամայական եղանակով կազմվածներից և անդեմ նախադասություններից,
3. առդրություն երևույթը,
4. լրացում-լրացյալի տեսակների կապակցման եղանակները,
5. սեռականով որոշիչը,
6. դերանվան որոշիչը,
7. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը,
8. բազմակի ստորոգյալը և միավորյալ նախադասությունը,
9. մասնական ուղիղ խնդիրը,
10. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից,
11. նախադասությունների կապակցումը խոսքի մեջ,
12. հավաստիական հարցական և հորդորական հարցական նախադասությունները,
13. համադասական նախադասության տեսակները,

ոճաբանությունից ու տեքստաբանությունից՝

1. իրադրական, անհատական և հեղինակային ոճերը,
2. գործառական ոճերի և պատկերավորման-արտահայտչական միջոցների ենթատեսակները,
3. առձայնույթը, համընթացումը, անշաղկապությունը,
4. շարադրանքի (տեքստի) տեսակները և կառուցվածքը,
5. տեղեկատվական ժանրերը,
6. գործնական գրությունները,
7. լրատվական ժանրերը,

5. Համարակալված բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.

Խոր...ուրորդ(1) ճանապարհը տանում էր մերթ **սաղար...ախիտ**(2) ու **եր...ներանգ**(3) անտառների **կածա...երով**(4), մերթ **փա...թամ**(5) ու **ջրար...ի**(6) մարգագետիններով: **Ու...տի**(7) էր գնում Մարգարը իր կնոջ՝ **Վիկտոր...այի**(8) հետ **...ուրբ**(9) Կարապետ եկեղեցի, որտեղ չէր եղել **տասնի...ը**(10) տարի:

1) 1 - **դ**, 2 - **թ**, 3 - **փ**, 4 - **ն**, 5 - **ր**, 6 - **փ**, 7 - **խ**, 8 - **յ**, 9 – **ա**, 10 - **նն**
2) 1 - **թ**, 2 - **թ**, 3 - **փ**, 4 - **նն**, 5 - **ր**, 6 - **բ**, 7 - **դ**, 8 - **յ**, 9 - **Ս**, 10 - **նն**
3) 1 - **դ**, 2 - **թ**, 3 - **փ**, 4 - **նն**, 5 - **ր**, 6 - **բ**, 7 - **խ**, 8 - **յ**, 9 - **Ս**, 10 - **ն**
4) 1 - **դ**, 2 - **դ**, 3 - **բ**, 4 - **նն**, 5 - **ռ**, 6 - **բ**, 7 - **խ**, 8 - **ի**, 9 - **Ս**, 10 – **ն**

Այս առաջադրանքի նպատակն է բառերի ու բառաձևերի ուղղագրությունը ստուգել շարադրանքի մեջ: Դա հնարավորություն է տալիս առավել համակողմանի ընդգրկելու ուղղագրությունը: Ստուգվում են ուղղագրական միաժամանակ մի քանի կանոնների վերաբերյալ գիտելիքներ (տարբեր ձայնավորներ, բաղաձայններ, երկհնչյուններ, մեծատառեր և այլն), ինչպես նաև հարանունների (**հնչյուն-հնչուն, կտրիճ-կտրիչ, վարգ-վարք, մրմռալ-մռմռալ** և այլն), համահունչ համանունների (**ուղտ-ուխտ, աղտ-ախտ, որթ-որդ, Ասիա-Ասյա** և այլն) ուղղագրության իմացությունը:

Հեշտ և արագ լուծելու համար կարող եք թեստ-գրքույկի մեջ նախ լրացնել բաց թողած տառերը, այնուհետև ստուգել, թե պատասխանի որ տարբերակին է համապատասխանում ձեր գտած լուծումը: Եթե ոչ մեկին չհամապատասխանեց, ուրեմն ձեր լուծումը սխալ է, և պետք է վերանայել: Եթե դրանից հետո էլ չեք գտնում ճիշտ լուծումը, ապա ընտրե՛ք ձեր լուծմանը առավել մոտ պատասխանը:

Տվյալ դեպքում ճիշտ պատասխանն է **3-րդը**:

Տեքստի վերաբերյալ առաջադրանքներից մեկում տրվում է համառոտ շարադրանք, և ներկայացվող հնարավոր պատասխան-դատողությունների մեջ պահանջվում է գտնել այն նախադասությունը, որն իր բովանդակած մտքով հակասում է (կամ, չի հակասում), բխում է (կամ, չի բխում) այդ տեքստի ընդհանուր բովանդակությանը կամ դրանում արտահայտված մտքերից որևէ մեկին: Ճիշտ պատասխանը գտնելու հարցում ձեզ կօգնեն հետևյալ հուշումները.

- **միայն, հատկապես, ամբողջությամբ, բացի, բացառապես, առավելապես, սովորաբար, հաճախ, երբեմն, հազվադեպ** և նման բառեր պարունակող դատողությունները կարող են տեքստի բովանդակության հետ հակասության մեջ լինել՝ այդ բառերի սահմանափակող կամ գնահատողական նշանակություն ունենալու պատճառով,

Սա համակցված առաջադրանք է, որ ստուգում է գիտելիքներ ու հմտություններ ձևաբանությունից, շարահյուսությունից և բառագիտությունից: Պահանջվում է որոշել, թե փակագծերում տրված բառերից որը նախադասության մեջ որ տեղում պետք է լինի, որպեսզի ստացվի ճիշտ նախադասություն: Բառերը տեղադրվելիս մեծ մասամբ ենթարկվում են ձևափոխությունների: Առաջադրանքն ուղղակիորեն չի պահանջում կատարել այդ ձևափոխությունները և ոչ էլ ստուգում է դրանց ճշտությունը: Բայց դրանք կատարել պետք է գոնե մտովի, այլապես հնարավոր չի լինի որոշել այս կամ այն բառի տեղը նախադասության մեջ: Իսկ ավելի հարմար է ձևափոխված բառերը գրել բացթողումների տեղում դրված կետերի փոխարեն, որպեսզի տեսանելի դառնա ճիշտ նախադասությունը: Վերջինս ամբողջացնելուց հետո կարելի է որոշել տեղադրված բառերի հերթականությունը, դա համեմատել լուծման առաջարկված տարբերակների հետ և նշել ճիշտ պատասխանը:

Պետք է նախ տեղադրել այն բառերը, որոնց տեղը և ձևը ձեզ համար կասկածելի չեն, հետո փորձել գտնել այն բառերի տեղն ու ձևը, որոնք համարում եք կասկածելի: Այդ ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել նախադասության իմաստին, կառուցվածքին, կետադրությանը, շարահյուսական կապերին, համաձայնություն և հոլովառություն պահանջող բառերին:

Տրված նախադասությունը վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ ***պիտի*** բառից հետո պետք է բայ լինի: Փակագծերում եղած երեք բայերից հատկապես ***գոռալ-ը*** կարող է այդտեղ լինել, քանի որ ամենից ավելի է հակված ունենալու ***վրա*** կապով խնդիր: Հավանական է, որ այդ բայի խնդիրը լինի տրված միակ գոյականը, թեև դերբայներ էլ կարող էին լինել: Բայց քանի որ մնացած դեպքերում հնարավոր է միայն բայեր տեղադրել, ուստի գոյականի համար մնում է մեկ հավանական տեղ: Ուրեմն երրորդ բառն է՝ ***նախրապանների: Պիտի*** բառից առաջ եղած ստորակետը ենթադրել է տալիս դերբայական դարձվածի գոյություն: Ուրեմն առաջին բաց թողած բառը պետք է դերբայ լինի: Քանի որ մնացած երկու բառերից ***հայտնվել*** բայը չի կարող լինել չորրորդ տեղում (որտեղ միայն ներգործական բայ կարող է տեղադրվել), ուրեմն հենց այստեղ պետք է լինի: Խոսքաշարը հուշում է ***հայտնվելով*** ձևը: Վերջին բառը վերջին տեղում ունի ***արածեցնում*** ձևը, որ թելադրվում է նախադասության ընդհանուր տրամաբանությամբ:

Այսպիսով՝ ճիշտ պատասխանն է **2-րդը**:

հայոց լեզվի մասին ընդհանուր գիտելիքից՝

1. գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի և բարբառների լեզվական առանձնահատկությունները, դասական ուղղագրությունը,
2. աշխարհաբարի ենթաշրջանները,
3. հայ և օտարազգի հայագետները:

Քննական առաջադրանքներում չեն ընդգրկվելու այնպիսի հարցեր, որոնք կապված են զուգաձևությունների հետ, այնպիսի օրինակներ, որոնք գրական-կանոնական չեն, արձանագրված չեն հանրահայտ բառարաններում, բարբառային, խոսակցական, հազվադեպ գործածվող, հնացած, նեղ մասնագիտական կամ դիպվածային են, օտարաբանություն, հասարակաբանություն կամ կեղծ գրական ձևեր են:

Հայոց լեզվի թեստային առաջադրանքների թեմատիկ-բովանդակային բաշխում

Հնչյունաբանություն

Ձայնավորների արտասանություն և ուղղագրություն
Բաղաձայնների ուղղագրություն
Երկհնչյունների ուղղագրություն
և - ի, **յ** ձայնակապի և կրկնակ բաղաձայնների ուղղագրություն
Վանկ, շեշտ
Հնչյունափոխություն
Բառերի այբբենական դասավորություն, տառերի թվային արժեք
Մեծատառերի ուղղագրություն
Բառերի բաղադրիչների գծիկով, անջատ կամ միասին գրություն

Բառագիտություն

Բառ, բառի իմաստ, բազմիմաստ բառեր
Բառի փոխաբերական իմաստ
Դարձվածքներ
Հոմանիշներ
Հականիշներ
Համանուններ, հարանուններ
Բառակազմություն
Բառապաշարի շերտեր. հնաբանություններ, օտարաբանություններ, փոխառություններ
Բառագործածության սխալի հայտնաբերում

Ձևաբանություն

Խոսքի մասեր
Գոյական. հոգնակիի կազմություն
Հոլովում և հոլովներ, հոդեր
Բայ. խոնարհման տեսակները, բայի սեռ, բայի կազմություն
Դերբայներ և ձևաբայեր
Դիմավոր ձևեր, դրական և ժխտական խոնարհում
Անկանոն և պակասավոր բայեր
Ածական. համեմատության աստիճանները
Թվական. տեսակները
Դերանուն. տեսակները
Մակբայ
Կապ, շաղկապ, ձայնարկություններ, վերաբերականներ
Քերականական ճիշտ և սխալ ձևեր
Ձևաբանական վերլուծություն

Շարահյուսություն

Բառակապակցություն, նախադասություն
Նախադասության կառուցվածքային և հաղորդակցական տեսակներ
Կապակցության եղանակներ. խնդրառություն, համաձայնություն
Խնդրառության կամ համաձայնության սխալի հայտնաբերում
Շարադասություն
Նախադասության անդամներ
Դերբայական դարձված
Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ
Բարդ նախադասության տեսակները
Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցում
Ստորադաս նախադասության բնույթ (շարահյուսական դեր)
Շաղկապի գործածություն
Պարզ և բարդ նախադասությունների փոխակերպում
Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք. փոխակերպում
Կետադրություն

Ոճաբանություն

Պատկերավորման-արտահայտչական միջոցներ. մակդիր, համեմատություն, անձնավորում, փոխաբերություն, փոխանունություն, չափազանցություն, բաղաձայնույթ, շրջադասություն, հակադրություն
Գործառական ոճեր

3. Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

ա. Սոնան թախիծով *(1. թոթովեց, 2. թոթվեց)* ուսը և արագ հեռացավ:
բ. Տնօրենը վատ էր *(1. վերաբերում, 2. վերաբերվում)* իր աշխատակիցներին:
գ. Փողոցով անցնում էր միջին տարիքի մի կին՝ գլխին *(1. հովարով, 2. հովհարով)* սպիտակ գլխարկ:
դ. Փորձառու մարզիչը վերջին *(1. ցուցումներն, 2. ցուցմունքներն)* էր տալիս իր սաներին, թեև վերջիններս քաջածանոթ էին տեղանքին:

1) ա - 2, բ - 1, գ - 1, դ - 2
2) ա - 1, բ - 2, գ - 1, դ - 2
3) ա - 1, բ - 2, գ - 2, դ - 1
4) ա - 2, բ - 2, գ - 1, դ - 1

Այս առաջադրանքը նրա համար է, որ բառերը (հարանուններ, համանուններ, հոմանիշներ և այլն) ճանաչվեն և իրարից տարբերակվեն խոսքաշարում՝ նախադասության մեջ: Ամեն նախադասության մեջ երկու բառեր առնված են փակագծերի մեջ: Պետք է որոշել, թե ամեն նախադասության մեջ փակագծերում տրված բառերից որն է համապատասխանում տվյալ նախադասության իմաստին, իսկ որը՝ ոչ: Պատասխանի չորս տարբերակ է առաջարկված, որոնցում նշվում է, թե որ նախադասության դեպքում համարակալված բառերից որն է համապատասխանում այդ նախադասությանը: Արագ լուծելու համար կարելի է նախ ընդգծել ճիշտ պատասխանները, հետո դրանք համեմատել տրված տարբերակների հետ: Ճիշտ պատասխանն է **4-րդը**:

4. Փակագծում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (տեղադրվելիք բառերը տրված են ուղիղ ձևերով).

Խոտն այստեղ չտեսնված համեղ էր, բուրավետ, բայց հանդապահը, ուր որ է ……., պիտի …… կարկամած …… վրա, թե ինչու են ապօրինի …… ուրիշի խոտը:

(1. արածել, 2. գոռալ, 3. հայտնվել, 4. նախրապան)

1) 1, 4, 3, 2
2) 3, 2, 4, 1
3) 3, 1, 2, 4
4) 4, 1, 2, 3

«Հրաժեշտի գազել»-ի հեղինակը չէ, իսկ Վ. Տերյանը՝ «Ռավեննայում»-ի, ապա կբացառվեն նաև 1-ին և 2-րդ տարբերակները, և կմնա 4-րդը՝ որպես ճիշտ պատասխան:

Ինչպես տեսաք, այս առաջադրանքի կատարման համար բավարարում է զույգերից ընդամենը 3-ի ճիշտ իմացությունը. 4-րդը ստացվում է ինքնաբերաբար: Քննական թեստերում լինելու է նաև այս կարգի առաջադրանքների ավելի բարդ տեսակը, երբ շարքերից որևէ մեկում (աջ կամ ձախ) տրվում է մեկ ավելորդ տարր: Ենթադրենք՝ մեր բերած օրինակի ձախ շարքում կա ևս մեկ գրողի անուն՝ Հովհաննես Շիրազ, որը նշված ստեղծագործություններից և ոչ մեկի հեղինակը չէ (կամ աջ շարքում նշված է ևս մեկ ստեղծագործության անուն, որը ձախ շարքի անուններից և ոչ մեկի հետ զույգ չի կազմում): Այս դեպքում ընտրությունը բարդանում է նրանով, որ հստակ պետք է իմանաք բոլոր չորս զույգերը, կամ էլ, ընդհակառակը, հեշտանում է, եթե վստահ եք, որ, այսպես կոչված, ավելորդ տարրը դիմացի շարքի տարրերից ոչ մեկի զույգը չէ: Այս դեպքում կարող եք տրված պատասխաններում միանգամից բացառել այն տարբերակը, որում կա ավելորդ տարրի համարը:

Ստորև տրված են մի քանի այլ տիպի առաջադրանքների նմուշներ՝ համառոտ բացատրություններով:

2. **Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն.**

1) ***Մարտի*** ամենաթեժ պահին ճայթեց կայծակը, և անձրև սկսվեց:
2) Այսօր ***մարտի*** ութն է՝ կանանց միջազգային օրը:
3) Իրենց ազատության համար ***մարտի*** էին ելել բոլորը:
4) Հայ ըմբիշը ութ օրում մասնակցեց ութ ***մարտի:***

Այս առաջադրանքը նրա համար է, որ համանունները ճանաչվեն և իրարից տարբերակվեն խոսքաշարում՝ նախադասության մեջ:

Նախադասությունների իմաստային վերլուծությամբ պետք է որոշել, թե ո՛ր երեք նախադասություններում է գործածված միևնույն բառը՝ իր նույն կամ նման իմաստներով: Այդ դեպքում պարզ կդառնա, որ չորրորդ նախադասության մեջ ընգծված բառը թեև ձևով համընկնում է մյուս երեքում ընդգծված բառերին, սակայն իմաստով միանգամայն տարբեր է, այսինքն՝ այլ բառ է, **համանուն է** մյուսներին:

Տվյալ դեպքում 2-րդ նախադասության մեջ ունենք **մարտ** (տարվա երրորդ ամիսը) բառը, իսկ մյուս երեքում՝ դրա համանունը՝ **մարտ** (կռիվ, ոտեմարտ) բառը: Հետևաբար ճիշտ պատասխանն է **2-րդը**:

Շարադրանք (տեքստ)

Նախադասությունների դասավորում ըստ տրամաբանական և քերականական կապի
Պարբերությունների դասավորում ըստ տրամաբանական և քերականական կապի
Շարադրանքին (տեքստին) իմաստով հակասող (չհակասող) նախադասության հայտնաբերում

Ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի վերաբերյալ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքները ներառում են հայ գրականության այն նյութերը, որոնցով սովորել են 2012 թվի շրջանավարտները, և ավագ դպրոցի դասագրքերի այն նյութերը, որոնք ներկայացված են բոլոր հոսքերի դասագրքերում, ինչպես նաև 7-9-րդ դասարանների ուսումնասիրած այն ստեղծագործությունները, որոնք նշված են պարտադիր ընթերցանության ցանկում:

Հայոց լեզվի և հայ գրականության միասնական թեստերով քննություն հանձնող շրջանավարտը կամ դիմորդը պարտավոր է ոչ միայն յուրացնել դպրոցական դասագիրքը, այլև կարդալ հանձնարարվող գեղարվեստական գրականությունը և անգիր սովորել այն բանաստեղծություններն ու հատվածները, որոնք նախատեսվում են սույն ուղեցույցում զետեղված ցանկով:

Շատ կարևոր է հայ գրականությունից քննական թեստերում ընդգրկվող նյութի սահմանների որոշարկման խնդիրը:

Ավագ դպրոցի հումանիտար և ընդհանուր, բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագրքերը թեմատիկ-բովանդակային (այդ թվում՝ գրողների և նրանց ստեղծագործությունների ընդգրկման) առումներով ունեն զգալի տարբերություններ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ թեստերում կարող են ընդգրկվել հիմնականում այն գրողները և այն ստեղծագործությունները, որոնք ընդհանուր են երկու տիպի դասագրքերում:

Սակայն այդպիսով նկատելիորեն նեղանում են ընդգրկվելիք նյութի շրջանակները, ինչը կարող է խիստ բարդացնել առաջադրանքների պատասխանների տարբերակների կազմման խնդիրը: Այդ պատճառով նպատակահարմար է գտնվել առաջադրանքներում ընտրողաբար ներառել նաև հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների հայ գրականության դասագրքերի նյութերից, ինչպես նաև ավագ դպրոցի միայն մեկ հոսքի դասագրքում ներառված, սակայն հայ գրականության դասական բարձրարժեք նմուշներ համարվող որոշ ստեղծագործություններ:

Քանի որ տարբեր դասագրքերում առկա են նաև ստեղծագործությունների մատուցման և վերլուծության հետ կապված տարբերություններ, ուստի առավել նախընտրելի է գրականության առաջադրանքների բնագրային-բովանդակային ուղղվածությունը: Սակայն այս մոտեցմամբ ներառվելիք նյութի ծավալի անսահմանափակությունից խուսափելու նպատակով անհրաժեշտություն կա հստակ ներկայացնելու բոլոր այն գրողների և նրանց այն ստեղծագործությունների ցուցակները, որոնց վերաբերյալ կարող են բնագրային-բովանդակային առաջադրանքներ կազմվել:

Ընդհանուր մոտեցումը հետևյալն է.

1. պարտադիր ընթերցանության և անգիր սովորելու համար հանձնարարվող ստեղծագործությունների և դրանց հեղինակների

տարբեր են մյուսներից, կա՛մ յուրահատուկ են իրենց պահանջով կամ լուծման եղանակներով:

Առաջադրանքներից մեկում տրվում են տարրերի (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, բացատրություններ և այլն) երկու շարքեր: Այդ շարքերում պետք է գտնել տարրերի՝ իրար համապատասխանող զույգերը: Այսպես՝ ենթադրենք՝ ձախ կողմում տրված են գրողների, իսկ աջ կողմում՝ ստեղծագործությունների անուններ:

1. **Ո՞ր գրողը ո՞ր ստեղծագործության հեղինակն է:**

ա. Հ. Թումանյան	1. «Ռավեննայում»
բ. Ա. Իսահակյան	2. «Վահագն»
գ. Ե. Չարենց	3. «Հայոց լեռներում»
դ. Վ. Տերյան	4. «Հրաժեշտի գազել»

1)ա - 2, բ - 4, գ - 3, դ - 1
2)ա - 4, բ - 1, գ - 2, դ - 3
3)ա - 3, բ - 2, գ - 1, դ - 4
4)ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4

Ձախ շարքի տարրերը, ինչպես տեսնում եք, նշված են տառերով, աջ շարքինը՝ թվերով: Առաջադրանքը լուծելու համար նախ մտովի առանձնացրե՛ք այն զույգը, որի ճիշտ լինելու մեջ համոզված եք: Ենթադրենք՝ գիտեք, որ «Ռավեննայում» բանաստեղծության հեղինակը Ավետիք Իսահակյանն է (արդեն պատրաստ է **բ - 1** զույգը): Ապա, թեկուզ փոքր-ինչ կասկածելով, վերհիշում եք «Հրաժեշտի գազել»-ի հեղինակի անունը՝ Վահան Տերյան: Ուրեմն գտնվեց նաև երկրորդ զույգը՝ **դ - 4**: Բավական է գտնել նաև երրորդ զույգը, ասենք՝ Հ. Թումանյան - «Հայոց լեռներում», և պարզ կդառնա նաև չորրորդ զույգը. «Վահագն» բանաստեղծության հեղինակը Ե. Չարենցն է: Ուրեմն նախնական տեսքով արդեն պատրաստ են բոլոր չորս զույգերը: Թեստ-գրքույկի մեջ՝ էջի ազատ մասում, նշեք (ցանկալի է՝ տառերի հերթականությամբ) որոշված զույգերը՝ **ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4**: Շարքերի ներքևում տրված են պատասխանի **4** տարբերակներ: Դրանցից գտե՛ք այն տարբերակը, որը համապատասխանում է ձեր գրածին: Եթե չկա այդպիսի պատասխան, նշանակում է՝ որևէ զույգ սխալ եք ընտրել: Այդ դեպքում անհրաժեշտ է վերանայել զույգերի ընտրությունը:

Կարելի է առաջնորդվել նաև բացառման եղանակով. բացառել այն տարբերակը կամ տարբերակները, որտեղ կա այնպիսի մի զույգ, որի սխալ լինելը ձեզ համար կասկածելի չէ: Ենթադրենք՝ այդ զույգը **բ - 2**-ն է, այսինքն՝ Ա. Իսահակյանը «Վահագն» բանաստեղծության հեղինակը չէ, հետևաբար կարող եք միանգամից անտեսել պատասխանների երրորդ տարբերակը: Եթե վստահաբար գիտեք նաև, որ Հ. Թումանյանը

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նորագույն շրջանի գրողներ	1. Ս. Կապուտիկյան 2. Գ. Էմին 3. Հ. Հովհաննիսյան 4. Վ. Դավթյան 5. Ռ. Դավոյան	6. Լ. Կամսար 7. Մ. Արմեն 8. Վ. Անանյան 9. Խ. Դաշտենց 10. Ս. Խանզադյան
Սփյուռքահայ գրողներ	1. Հ. Օշական 2. Վ. Թեքեյան 3. Հ. Մնձուրի 4. Համաստեղ	5. Վ. Շուշանյան 6. Մ. Իշխան 7. Ա. Ծառուկյան 8. Հ. Կարապենց
Օտարագիր գրողներ	1. Լ. Զ. Սուրմելյան	

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միասնական քննության թեստի բոլոր **80** առաջադրանքն էլ ընտրովի պատասխաններով են, այսինքն՝ տրված է չորս պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0: Առաջադրանքը կատարված է համարվում, եթե քննություն հանձնողն ընտրում է ճիշտ պատասխանը:

Առաջադրանքների պահանջները հիմնականում ձևակերպվում են հարցի ձևով (դրական կամ ժխտական), առանձին դեպքերում՝ հատկապես տեսական գիտելիքների ստուգման առաջադրանքներում, առաջարկվող պատասխանները շարունակում են պահանջի միտքը: Երկու դեպքում էլ պահպանվում է լուծման սկզբունքը. տրված հնարավոր չորս պատասխաններից պետք է ընտրել մեկը:

Առաջադրանքներում հարցեր կարող են տրվել առանձին միավորների (հնչյուն, բառ, նախադասություն, դարձույթ, ստեղծագործության վերնագիր և այլն), միավորների շարքի, ավելի ծավալուն միավորի կազմում եղած միավորի (հնչյունը բառի մեջ, ածանցը բառի մեջ, բառը նախադասության մեջ և այլն) վերաբերյալ:

Պահանջները հնարավորության սահմաններում ձևակերպվում են միակերպ՝ ուղղակի հարցման եղանակով, որը, կարծում ենք, քննություն հանձնողին ոչ միայն օգնում է արագ և ճիշտ ընկալելու պահանջը, այլև հնարավորություն է տալիս կենտրոնանալու հարցի և առաջարկվող պատասխանների բուն բովանդակության վրա:

Լուծման եղանակների բացատրության կարիք ունեն մի քանի առաջադրանքներ, որոնք կա՛մ իրենց բնույթով ու կառուցվածքով փոքր-ինչ

վերաբերյալ կարող են դրվել ուղեցույցի «Հայ գրականության թեստային առաջադրանքների թեմատիկ-բովանդակային տարատեսակներ» բաժնում նշված բոլոր տեսակների առաջադրանքներ,

2. ցուցակներում չնշված, բայց ավագ դպրոցի բոլոր հոսքերի դասագրքերում ներկայացված և այս կամ այն չափով վերլուծված ստեղծագործությունների վերաբերյալ կարող են դրվել միայն ճանաչողական բնույթի հարցեր՝ միայն դասագրքերում առկա նյութի շրջանակներում,
3. դասագրքերում սոսկ թվարկված ստեղծագործությունների վերաբերյալ որևէ կարգի հարց չի կարող դրվել:

Դասագրքերում առկա են նաև հետևյալ բաժինները՝ հայ նորագույն գրականություն, սփյուռքահայ գրականություն, օտարագիր հայ գրողներ: Առանձին ցուցակով ներկայացվում են նաև այդ գրողների անունները՝ առանց ստեղծագործությունների նշման: Նրանց վերաբերյալ այս փուլում կարող են տրվել միայն հետևյալ տիպի հարցեր՝ գրողի ճանաչում, նրա ժամանակաշրջանի իմացություն, հայ նորագույն գրականության, սփյուռքահայ գրականության ներկայացուցիչ, թե օտարագիր հայ գրող լինելու իրողության տարբերակում: Այդ ցուցակում նշված գրողների հարցում արված է միայն մեկ բացառություն. նկատի ունենալով Վ. Սարոյանի նշանակալից տեղը համաշխարհային գրականության ասպարեզում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքը ուսումնասիրվում է հիմնական դպրոցում՝ այդ ստեղծագործությունը ևս ներառված է պարտադիր ընթերցանության ցանկում:

Գրական երկի կառուցվածքային հատկանիշների, գրական տեսակների, չափածոյի տաղաչափական յուրահատկությունների, գրական ուղղությունների և այլնի վերաբերյալ հարցեր քննական թեստերում տեղ են գտնելու այնքանով, որքանով ներկայացված են դասագրքում: Օրինակ՝ չի կարող թեստում հայտնվել այն գրական տեսակի կամ դրա որևէ հատկանիշի վերաբերյալ հարց, որի մասին դասագրքում **որոշակի գիտելիք** չի տրվում: Այսպես՝ **վեպը, պատմվածքը, նորավեպը, առասպելը, վիպերգը** (էպոսը), **առակը, պոեմը** (իր տարատեսակներով՝ քնարական, քնարաէպիկական և էպիկական), **գազելը, հայրենը, քառյակը, դրաման, կատակերգությունը, ողբերգությունը** և այլն՝ որպես գրական երկի տեսակներ կամ ժանրեր, բավարար չափով ներկայացված են դասագրքում, և դրանց վերաբերյալ կարող են առաջադրանքներ տրվել: Իսկ, օրինակ, **գրական դիմանկարի, եղերերգի, գանձի, բանքի, սոցիալական վեպի, մենագրական վեպի, հուշագրության** վերաբերյալ դասագրքում այդպիսի գիտելիքներ չեն տրվում, ուստի և դրանք չեն կարող հարցման առարկա դառնալ:

Կենսագրական տվյալներ, երկերի, բանաստեղծական ժողովածուների, շարքերի և այլ փաստական նյութերի մասին գիտելիքներ: Գրողների կենսագրության, ստեղծագործությունների փաստական տվյալների յուրացումը, ինչ խոսք, դեռևս գրականության բավարար իմացություն չէ: Սակայն գրական երկի ընկալումը և գրողի ստեղծագործական աշխարհի բացահայտումը անպայման ենթադրում են այս նյութի գոնե ընդհանուր իմացություն: Այսպես, օրինակ՝ քննություն հանձնողը պարտավոր է հիշել «Սասնա ծռեր» վիպերգի ստեղծման դարաշրջանը, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի և դասագրքում առանձին խորագրերով ներկայացվող մյուս բոլոր հեղինակների ապրած ժամանակաշրջանները, գրական-գեղարվեստական գործընթացի մեջ էական դեր կատարած ստեղծագործությունների կամ ժողովածուների, օրինակ, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Ռաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» և Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպերի, Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի, Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի, Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի և այլ գործերի ստեղծման դարաշրջանները, ինչպես նաև դասագրքում հանգամանորեն ներկայացված այլ ժողովածուների ու բանաստեղծական շարքերի խորագրերը:

Կենսագրական տվյալներից **ցանկալի է** կեղծանվամբ հայտնի գրողների իսկական անուն-ազգանունների, գրական առավել խոշոր դեմքերի ծննդյան ու մահվան թվականների, նրանց գրական և հասարակական գործունեության կարևոր դրվագների, ինչպես նաև հայ գրականության պատմության համար էական մի շարք կարևոր իրողությունների իմացությունը, եթե դասագրքում դրանք ներկայացված են (օրինակ՝ Մխիթարյան միաբանություն, «Վերնատուն» գրական խմբակ, Հայ գրողների կովկասյան ընկերություն, նորագույն հայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջան):

Հայ գրականության փաստական նյութի իմացությունը ստուգվում է հիմնականում **Ա** մակարդակում ներկայացված առաջադրանքներով, իսկ դիմորդի վերլուծական կարողությունները՝ գերազանցապես **Բ** մակարդակում ստեղծագործության գաղափարական-բովանդակային կամ կառուցվածքային և գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ առաջադրանքներով:

Ն. Զարյան	«Արա Գեղեցիկ»		
Հ. Շիրազ	1. «Մայրս» 2. «Մայրս փոքրիկ…» 3. «Բիբլիական»	1. «Թագադրում» 2. «Գարնանամուտ» 3. «Հայ ժողովրդի երգը» 4. «Կուզեի նստել մի քարի վրա»	
Հ. Սահյան	1. «Իջավ սարյակը սարում» 2. «Քարափը» 3. «Մասրենի» 4. «Անձրև» 5. «Պապը» 6. «Չես ասի ոչ մի բառով» 7. «Անունդ տալիս»	1. «Անտառում» 2. «Օրը մթնեց…»	
Պ. Սևակ	1. «Անլռելի զանգակատուն» 2. «Վարք մեծաց» 3. «Առաջադրանք համայն աշխարհի…» 4. «Մարդ էլ կա, մարդ էլ» 5. «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»	«Անլռելի զանգակատուն» պոեմից երկու հատված («Գարուն էր…», «Ղողանջ հաղթության» սկիզբը՝ 14 տող)	
Հ. Մաթևոսյան	1. «Նարինջ զամբիկը» 2. «Աշնան արև» 3. «Կանաչ դաշտը»		
Վ. Սարոյան	«Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»		

	անգութ ու մթին» 8. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»		
Ե. Չարենց	1. «Տաղարան» շարքը 2. «Անվերնագիր» («Իմ մահվան օրը…») 3. «Մահվան տեսիլ» («Որպես լքված թավջութակի…») 4. «Դանթեական առասպել» 5. «Ամբոխները խելագարված» 6. «Գանգրահեր տղան» 7. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» 8. «Դեպի լյառը Մասիս» 9. «Հարդագողի ճամփորդները»	1. «Վահագն» 2. «Ես իմ անուշ Հայաստանի» 3. «Տաղ անձնական» 4. «Հեռացումի խոսքեր»	1. «Ճամփին» 2. «Անքուն գիշերին» 3. «Մեռելոց» 4. «Թուղթ բանաստեղծ բարեկամիս» 5. «Սոմա»
Դ. Դեմիրճյան	1. «Վարդանանք» 2. «Ավելորդը»		
Ա. Բակունց	1. «Մթնաձոր» 2. «Խոնարհ աղջիկը» 3. «Միրհավ» 4. «Ալպիական մանուշակ» 5. «Սպիտակ ձին»		1. «Կյորես» 2. «Ծիրանի փողը»
Կ. Զարյան			«Նավը լեռան վրա»
Շ. Շահնուր	«Նահանջը առանց երգի»		
Գ. Մահարի	«Ծաղկած փշալարեր»		

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ-ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ

- Հեղինակի ապրած ժամանակաշրջանի իմացություն
- Հեղինակի կամ նրա ծրագրային երկի մասին նշանավոր ասույթի ճանաչում
- Ստեղծագործության ընդհանուր բնութագիր
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի ճանաչում
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի կառուցվածքային կամ ժանրային բնորոշում
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի թեմատիկ բնորոշում
- Ստեղծագործության հատվածի բովանդակության ու վերնագրի կամ դիպաշարային (սյուժետային) դրվագի իմացություն
- Անգիր հանձարարված նյութի իմացություն. տողերի դասավորում կամ բաց թողած բառի կամ բառերի լրացում
- Հատվածի՝ որ կամ ում ստեղծագործությունից լինելու իմացություն
- Գլխավոր հերոսի կամ հերոսների խմբի, նրանց և միջավայրի առնչությունների ճանաչում կամ բնութագրում
- Հերոսին բնութագրող խոսքի (իր կամ ուրիշի կամ հեղինակի) ճանաչում
- Գրական տեսակների, հեղինակների դավանած ուղղությունների, հոսանքների իմացություն
- Երկի ընդհանուր բովանդակության իմացություն
- Երկերի առնչությունների, սկզբնաղբյուրների և ստեղծման շարժառիթների իմացություն
- Նշանավոր հոդվածների հեղինակների և բովանդակության ճանաչում

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՂԻ-ՆԱԿՆԵՐ	ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՆԳԻՐ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Մովսես Խորե-նացի	1. «Հայոց պատմություն»-ից Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Վահագնի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի մասին 2. «Ողբ». 3. Գիրք երրորդ, գլուխ ԽԷ. «Երանելի Մեսրոպի մասին», գլուխ ԾԲ. «Դանիելյան նշանագրերի մասին», գլուխ ԾԳ. «Մեսրոպյան նշանագրերի մասին, որ տրվեցին երկնային շնորհով»	1. «Թէպէտ և եմք ածու փոքր…» բառերից մինչև «և արժանի գրոց յիշատակի» բառերը (գրաբար) 2. «Վահագնի ծնունդը» (գրաբար) 3. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշես…» (գրաբար) 4. «Հեծաւ արի արքայն…» (գրաբար)	
Կորյուն			«Վարք Մաշտոցի»
Ագաթան-գեղոս			«Պատմություն հայոց»
Փավստոս Բուզանդ			«Պատմություն հայոց»
Եղիշե			«Վարդանի և հայոց պատերազմի մասին»
Ղազար Փարպեցի			«Պատմություն հայոց»
	«Մասնա ծռեր». համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով		

Դ. Վարու-ժան	1. «Հարճը» 2. «Արտերուն հրավերը» 3. «Ցորյանի ծովեր»	1. «Ձոն» 2. «Հունձք կը ժողվեմ»	1.«Հիվանդ է» 2.«Նեմեսիս» 3.«Անիի ավերակ-ներուն մեջ» 4.«Կիլիկյան մոխիրներուն» 5.«Ջարդը» 6.«Նավա-սարդյան» 7.«Մեռած աստվածներուն» 8.«Ճանապարհ խաչի» 9.«Մշակները» 10. «Առաջին ծիլեր»
Լ. Շանթ	«Հին աստվածներ»	«Հին աստ-վածներ»-ից «Իջե՛ք, իջե՛ք, երազնե՛ր» հատվածը	
Սիա-մանթո			1. «Դյուցազնորեն» 2. «Հայորդիներ» 3. «Հոգեվարքի և հույսի ջահեր»
Մ. Մեծա-րենց	1. «Արևին» 2. «Նավակներ» 3. «Հյուղը»	1. «Վայրկյան» 2. «Սիրերգ» («Գիշերն անույշ է…») 3. «Աքասիանե-րու շուքին տակ»	1. «Ձմրան պարզ գիշեր» 2. «Մեղուները» 3. «Իրիկունը» 4. «Տո՛ւր ինձի, Տե՛ր...» 5. «Հովը»
Վ. Տերյան	1. «Աշնան մեղեդի» 2. «Ոսկեհանդերձ եկար» 3. «Իմ խաղաղ երեկոն է հիմա» 4. «Կարուսել» 5. «Հրաժեշտի գազել» 6. «Որպես Լաերտի որդին» 7. «Իջնում է գիշերն	1. «Տխրություն» 2. «Fatum» 3. «Գարուն» 4. «Սի՞թե վերջին պոետն եմ ես» 5. «Կարծես թե դարձել եմ ես տուն»	1. «Աշնան երգ» 2. «Գարնանա-մուտ»

		տողից մինչև վերջ) 4. «Հայոց լեռներում» 5. քառյակնե-րից՝ «Տիե-զերքում աստ-վածային…», «Կյանքս արի հրապարակ», «Իմ կնուն-քին…», «Ռե-բանն արնոտ մարդակերը էն անբան…», «Աշնան ամ-պին ու զամ-պին», «Ամեն մի սիրտ…»	
Ավ. Իսա-հակյան	1. «Սև-մութ ամպեր» 2. «Է՜յ, ջան-հայրենիք» 3. «Օտար, ամայի ճամփեքի վրա» 4. «Մի մրահոն աղջիկ տեսա» 5. «Մեր պատմիչները և մեր գուսանները» 6. «Հայրենիքիս» («Ցորենի ծփուն արտերի միջին») 7. «Հավերժական սերը» 8. «Հայրենի հողը» 9. «Աբու-Լալա Մահարի» 10. «Լիլիթ» 11. «Համբերանքի չիբուխը» 12. «Սաադիի վերջին գարունը»	1. «Ռավեննա-յում» 2. «Աբու-Լալա Մահարի»՝ երրորդ սուրահի սկզբից 22 տող (մինչև «…և դարձնում աշխարհն ահավոր ջեհնեմ» տողը)	1. «Դարդս լացեք» 2. «Ասպետի սերը» 3. «Արագածին»

Գրիգոր Նարե-կացի	1. «Տաղ Վարդավառի» 2. «Մեղեդի ծննդյան» 3. «Մատյան ողբերգության», բան Գ, հատված Բ («Նորակերտ մատյանն այս ողբերգության…» տողից մինչև «Հանապազ մեծիդ բարեգթության դիմելու համար» տողը), բան Ժէ, հատված Ա («Աղաչում եմ քեզ՝ բոլոր չարաչար ու տաժանելի…» տողից մինչև «Մեծդ փոքրիս հետ, լույսդ՝ խավարիդ…»)	«Տաղ Վարդավառի» (հումանիտար հոսքի դասագրքում ընդգրկված գրաբար հատվածը)	
Մխիթար Գոշ	1. «Արջ և մրջյուն» 2. «Բամբակենի և սոսի» 3. «Աստղերի ժողովը» 4. «Ոսկին և ցորենը»		«Դատաստա-նագիրք»
Վարդան Այգեկցի	1. «Իմաստուն զինվոր» 2. «Իշխան և այրի կին» 3. «Եզը և ձին»		
Ֆրիկ	1. «Գանգատ» 2. «Բան պիտանի»		
Քուչակ	1. «Եկին ու խապար բերին» 2. «Փողոցովդ ի վար կուգի» 3. «Երեկ ցորեկով բարով» 4. «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ» 5. «Ժամ-ժամ զիմ ղարիպութինս»	1. «Ես աչք ու դու լոյս, հոգի՛» 2. «Քանի՞ ու քանի՞ ասեմ» 3. «Երբ սէրն ի յաշխարհս եկաւ»	

	6. «Կելնեմ, կուգամ, մանկտի՛ք» 7. «Ես շեֆթալուի մորճ մ’էի»		
Մայաք-Նովա	1. «Դուն էն գլխեն իմաստուն իս» 2. «Աշխարումս ախ չիմ քաշի» 3. «Թամամ աշխար պտուտ էկա» 4. «Աշխարս մե փանջարա է»		
Խ. Աբով-յան	«Վերք Հայաստանի». «Հառաջաբանը», երրորդ գլուխը		1. «Աղասու խաղը» 2. «Հազարա-փեշեն» 3. «Պարապ վախտի խաղալիք» 4. «Առաջին սերը» 5. «Թուրքի աղջիկը» 6. «Նախաշավիղ»
Մ. Նալ-բանդյան	1. «Իտալացի աղջկա երգը» 2. «Մանկության օրեր»	1. «Ազատու-թյուն» 2. «Իտալացի աղջկա երգից» առաջին 8 քառատողը	1. «Երկու տող» 2. «Երկրագործուի թյունը որպես ուղիղ ճանապարհ» 3. «Ապոլլոնին» 4. «Վազող ջրին»
Պ. Դուր-յան	1. «Սիրել» 2. «Տրտունջք» 3. «Իմ ցավը»	«Լճակ»	
Ռաֆֆի	«Սամվել»		1. «Խենթը» 2. «Կայծեր» 3. «Ջալալեդդին» 4. «Դավիթ-Բեկ» 5. «Սալբի» 6. «Հարեմ» 7. «Ոսկի աքաղաղ»

Հ. Պարոն-յան	«Մեծապատիվ մուրացկանները»		1. «Քաղաքավա-ության վնասները» 2. «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» 3. «Ազգային ջոջեր» 4. «Իմ ձեռատետրը» 5. «Ծիծաղ» 6. «Պաղտասար աղբար»
Մուրացան	«Գևորգ Մարզպետունի»		1. «Խորհրդավոր միանձնուհի» 2. «Նոյի ագռավը» 3. «Առաքյալը» 4. «Ռուզան»
Շիրվան-զադե	1. «Քառս» 2. «Պատվի համար» 3. «Արտիստը»		1. «Նամուս» 2. «Չար ոգի» («Ցավագարը»)
Նար-Դոս	1. «Ես և նա» 2. «Նեղ օրերից մեկը»		1. «Մեր թաղը» պատմվա-ծաշարը 2. «Սպանված աղավնին»
Գ. Զոհ-রাপ	1. «Այինկա» 2. «Զաբուղոն» 3. «Երջանիկ մահը» 4. «Փոստալը» 5. «Այրին» 6. «Ճիտին պարտքը»		
Հ. Թում-մանյան	1. «Հայրենիքիս հետ» 2. «Անուշ» 3. «Թմկաբերդի առումը» 4. «Փարվանա» 5. «Գելը» 6. «Գիքորը» 7. «Քաջ Նազար»	1. «Անուշ» (նախերգանք) 2. «Թմկաբերդի առումը» (նախերգանք) 3. «Փարվանա» («Էսպես ան-ցան շատ տարիներ….	1. «Հառաչանք» 2. «Հոգեհան-գիստ» 3. «Հայոց վիշտը»